ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

18 օգոստոսի 2026 թվականի թիվ 2125-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 3-Ի N 1682-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝**որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի հուլիսի 3-ի «Ինքնակամ կառուցված շինությունն օրինականացնելու և համայնքային սեփականություն ճանաչելու մասին» 1682-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ լրացումը՝

1) «զբաղեցրած 51.5քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն» բառերից հետո կարդալ «համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման՝ գործառնական նշանակության» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 18
ք.Սևան

2308

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

18 օգոստոսի 2026 թվականի թիվ 2126-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով քաղաքացիներ Արփիկ Մկրտչյանի և Համլետ Սնեյանի հայտը՝ **որոշում եմ.**

1. Արփիկ Մկրտչյանին տրամադրել նախագծման թույլտվություն Սևան համայնք, ք. Սևան, Ֆրանսիական փողոց թիվ 6 / 3 հասցեում գտնվող գոյություն ունեցող անգարի քանդման, հասարակական նշանակության շենքի և օժանդակ շինության կառուցման համար:
2. Արփիկ Մկրտչյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 18
ք.Սևան

2309

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

18 օգոստոսի 2026 թվականի թիվ 2127-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Արման Դավթյանի դիմումը՝ Գեղարքունիքի մարզ, գ. Գեղամավան հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 1159340/ համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, գ. Գեղամավան հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Գեղամավան, 2-րդ փողոց, 12-րդ նրբանցքի 1-ին փակուղի թիվ 10 բնակելի տուն հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 18
ք.Սևան

2310

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

19 օգոստոսի 2026 թվականի թիվ 2128-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 23-Ի N 1856-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի հուլիսի 23-ի «Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի հուլիսի 3-ի N 1680-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին» թիվ N 1856-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 19
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

19 օգոստոսի 2026 թվականի թիվ 2129-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. N 731-Ն որոշմամբ, 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ կետերով, հիմք ընդունելով քաղ. Արտակ Մկրտչյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Հ. Թումանյան փողոց թիվ 15 / 4 բնակելի տուն /վկայական N 19022026-05-0006/ հասցեում գտնվող 0.06 հա մակերեսով հողամասում սեփականատիրոջ կողմից ինքնակամ կատարված շինարարական աշխատանքներն օրինականացնելու մասին, նկատի ունենալով որ շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Սեփականության իրավունքով Արտակ Պետիկի Մկրտչյանին պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Հ. Թումանյան փողոց թիվ 15 / 4 հասցեում գտնվող 0.06 հա մակերեսով հողատարածքում սեփականատիրոջ կողմից 1993թ. ինքնակամ կառուցված 29. 6քմ մակերեսով նկուղը /ներքին մակերեսը՝ 19. 53քմ/, երկհարկանի բնակելի տունը՝ 1-ին հարկ՝ 152. 01քմ /ներքին մակերեսը՝ 126. 0քմ/, 2-րդ հարկ՝ 152. 01քմ /ներքին մակերեսը՝ 126. 0քմ/, 80. 8քմ մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 71. 35քմ/, 0. 45քմ մակերեսով պարիսպը ճանաչել օրինական՝ համայնքի բյուջե մուծելով յուրաքանչյուր օրինականացվող 1քմ շինության համար՝ 1673դրամ:
2. Սույն որոշման ընդունման օրվանից սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում՝ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 19
ք.Սևան

2312

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

19 օգոստոսի 2026 թվականի թիվ 2130-Ա

«ԱՐՍԵՆ 96» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ ԱՐՍԵՆ ՔՈՉԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. «Արսեն 96» ՍՊԸ-ի տնօրեն Արսեն Քոչարյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը երկարաձգել մինչև փորձագիտական եզրակացություն տալը:
2. Վարույթը վերսկսել փորձագիտական եզրակացությունը պատրաստ լինելու օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկել դատական կարգով երկու ամսվա ընթացքում:
4. Սույն որոշմամբ ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 19
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

19 օգոստոսի 2026 թվականի թիվ 2131-Ա

«ԻՇԽԱՆ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. «Իշխան» ՍՊԸ-ի տնօրենի նկատմամբ հարուցված վարչական վարույթը երկարաձգել մինչև փորձագիտական եզրակացություն տալը:
2. Վարույթը վերսկսել փորձագիտական եզրակացությունը պատրաստ լինելու օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկել դատական կարգով երկու ամսվա ընթացքում:
4. Սույն որոշմամբ ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 19
ք.Սևան

2314

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

19 օգոստոսի 2026 թվականի թիվ 2132-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՅԿ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Քաղաքացի Հայկ Ղազարյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը երկարաձգել մինչև փորձագիտական եզրակացություն տալը:
2. Վարույթը վերսկսել փորձագիտական եզրակացությունը պատրաստ լինելու օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկել դատական կարգով երկու ամսվա ընթացքում:
4. Սույն որոշմամբ ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 19
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

19 օգոստոսի 2026 թվականի թիվ 2133-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով «ԼԻԼԵՅՔ» ՍՊԸ-ի տնօրեն Ն. Հարությունյանի հայտը՝ **որոշում եմ.**

1. «ԼԻԼԵՅՔ» ՍՊԸ-ին տրամադրել նախագծման թույլտվություն Սևան համայնք, ք. Սևան, Հանգստի գոտու 2-րդ փողոց թիվ 5 / 10 հասցեում գտնվող գոյություն ունեցող ինֆեկցիոն մասնաշենքի քանդման, ռեստորանի և ջրի ռեզեռվուարի կառուցման համար:
2. «ԼԻԼԵՅՔ» ՍՊԸ-ն պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 19
ք.Սևան

2316

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

19 օգոստոսի 2026 թվականի թիվ 2134-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով քաղ. Վանիկ Աբգարյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Վանիկ Աբգարյանին տրամադրել շինարարության թույլտվություն Սևան համայնք, ք. Սևան, Խաղաղության փողոց թիվ 10 / 40 հասցեում գտնվող հողատարածքում տաղավարի կառուցման համար:
2. Վանիկ Աբգարյանը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. Վանիկ Աբգարյանը պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 19
ք.Սևան

2317

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

19 օգոստոսի 2026 թվականի թիվ 2135-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով քաղ. Սևակ Ստեփանյանի հայտը՝ **որոշում եմ.**

1. Սևակ Ստեփանյանին տրամադրել նախագծման թույլտվություն Սևան համայնք, գ. Դդմաշեն, 1-ին փողոց, թիվ 4 հասցեում գտնվող հողամասում հասարակական սպասարկման օբյեկտի կառուցման համար:
2. Սևակ Ստեփանյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 19
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

19 օգոստոսի 2026 թվականի թիվ 2136-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Սամվել Սողոմոնյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, գ. Դդմաշեն հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 1101354/ համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, գ. Դդմաշեն հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել՝ Սևան համայնք, գ. Դդմաշեն, 1-ին փողոց թիվ 71 բնակելի տուն հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 19
ք.Սևան

2319

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

19 օգոստոսի 2026 թվականի թիվ 2137-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «Դավթյան հայր և որդիներ» ՍՊԸ-ի լիազոր անձ Ռոլան Դավթյանի դիմումը՝ հողամասի կառուցապատման իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, ք. Սևան հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 20032025-05-0057/ համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Հանգստի գոտու 4-րդ փողոց թիվ 12 / 1 հողամաս և Սևան համայնք, ք. Սևան, Հանգստի գոտու 4-րդ փողոց թիվ 12 / 2 հողամաս հասցեներ:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 19
ք.Սևան

2320

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

19 օգոստոսի 2026 թվականի թիվ 2138-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի N 1891-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝**որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի հուլիսի 27-ի «Ինքնակամ կառուցված շինությունն օրինականացնելու և համայնքային սեփականություն ճանաչելու մասին» 1891-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) «Գեղարքունիք–1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում Սևան քաղաքի լրամշակված գլխավոր հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային, բնակելի կառուցապատման՝ գործառնական նշանակության» բառերի փոխարեն կարդալ «Գեղարքունիք–1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական՝ նպատակային, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ գործառնական նշանակության» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 19
ք.Սևան

2321

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

19 օգոստոսի 2026 թվականի թիվ 2139-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 30-Ի N 1940-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի հուլիսի 30-ի «Հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» N 1940-Ա որոշման 1-ին կետը կարդալ նոր խմբագրությամբ՝

1) «Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.10752հա մակերեսով հողատարածքը /գ. Ծաղկունք/ ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք–1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա Ծաղկունք բնակավայրի գլխավոր հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, խառը կառուցապատման՝ գործառնական նշանակության՝ տրամադրելով Սևան համայնք, գ. Ծաղկունք թիվ 22 հողամաս հասցե:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 19
ք.Սևան

2322

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

19 օգոստոսի 2026 թվականի թիվ 2140-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 3-Ի N 1680-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի հուլիսի 3-ի «Ինքնակամ կառուցված շինությունն օրինականացնելու և համայնքային սեփականություն ճանաչելու մասին» 1680-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ լրացումը՝

1) «զբաղեցրած 36.1քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն» բառերից հետո կարդալ «համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային, այլ հողեր՝ գործառնական նշանակության» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 19
ք.Սևան

2323

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

19 օգոստոսի 2026 թվականի թիվ 2141-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 29-Ի N 1326-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝**որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի մայիսի 29-ի «Ինքնակամ կառուցված շինությունն օրինականացնելու և համայնքային սեփականություն ճանաչելու մասին» 1326-Ա որոշման 2-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) «Սևան համայնք գ. Գագարին, Երիտասարդական փողոց թիվ 1 / 2 կիսակառույց հասցե» բառերի փոխարեն կարդալ «Սևան համայնք գ. Գագարին, Գայի փողոց, 5 շենք թիվ 9 նկուղ հասցե» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 19
ք.Սևան

2324

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

19 օգոստոսի 2026 թվականի թիվ 2142-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության՝ 26.05.2016թ. N550-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Հովհաննես Գևորգյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, համայնք Սևան, գ. Լճաշեն, Պլտինի փողոց թիվ 4 հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 13052020-05-0049/ զբաղեցրած 0.05 հա մակերեսով հողատարածքն ընդլայնելու մասին, հաշվի առնելով, որ նշված հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Սեփականության իրավունքով Հովհաննես Աշոտի Գևորգյանին պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Լճաշեն, Պլտինի փողոց թիվ 4 հասցեում գտնվող հողամասի զբաղեցրած 0.05 հա մակերեսով հողատարածքն ընդլայնել 0.049 հա մակերեսով /հասցե՝ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Լճաշեն, Պլտինի փողոց թիվ 23 / 1, վկայական՝ 02072026-05-0016/՝ ուղղակի վաճառքի կարգով օտարելով Հովհաննես Աշոտի Գևորգյանին՝ հողի կադաստրային արժեքը 1քմ՝ 792. 0 դրամ վճարելու պայմանով:
2. Սույն որոշումը ենթակա է հողի պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մուծելուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 19
ք.Սևան

2325

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

19 օգոստոսի 2026 թվականի թիվ 2143-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, 10.06.2008թ. ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն և ՀՀ կառավարության՝ 18. 05 2006թ. թիվ 912-Ն որոշումների պահանջներով, հիմք ընդունելով քաղ. Վազգեն Մելոյանի դիմումը՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ Վազգեն Մելոյանին պատկանող, Ծովագյուղ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի՝ 14. 04. 1991թ. N4 նիստի որոշմամբ Արևհատ Հակոբյանին, Վազգեն, Կարեն, Մարիամ և Հասմիկ Մելոյաններին հատկացված 1890քմ. մակերեսով հողատարածքը և հողատարածքում մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին, նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ Վազգեն Մելոյանին պատկանող, Ծովագյուղ համայնքի հողային բարեփոխումների սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի՝ 14. 04. 1991թ. N4 նիստի որոշմամբ՝ Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ գյուղում Արևհատ Իդվարիկին Հակոբյանի /ծնված՝ 31. 12. 1958թ./, Վազգեն Արշակի Մելոյանին /ծնված՝ 07. 04. 1956թ. /, Կարեն Վազգենի Մելոյանին /ծնված՝ 31. 12. 1980թ. /, Մարիամ Վազգենի Մելոյանին /ծնված՝ 12. 05. 1982թ./, Հասմիկ Վազգենի Մելոյանին /ծնված՝ 25. 01. 1984թ. / անհատական բնակելի տան կառուցման համար հատկացված 1890քմ մակերեսով հողատարածքին կից՝ 109. 6քմ մակերեսով հողատարածքը ճանաչել Արևհատ Հակոբյանի, Վազգեն, Կարեն, Մարիամ և Հասմիկ Մելոյանների սեփականության իրավունքը :
2. Արևհատ Հակոբյանին, Վազգեն, Կարեն, Մարիամ և Հասմիկ Մելոյաններին պատկանող 1999. 6քմ մակերեսով հողատարածքում 1975թ. կառուցված 34. 0քմ մակերեսով կիսանկուղի /ներքին մակերեսը՝ 24. 10քմ/, 82. 9քմ մակերեսով բնակելի

տունը /ներքին մակերեսը՝ 64. 3քմ/, 5. 60քմ մակերեսով բաց պատշգամբը, 1965թ. կառուցված 34. 2քմ մակերեսով կիսանկուղը /ներքին մակերեսը՝ 24. 4քմ/, 100. 8քմ մակերեսով բնակելի տունը /ներքին մակերեսը՝ 69. 80քմ/, 75. 0քմ մակերեսով անասնագոմը /ներքին մակերեսը՝ 63. 3քմ/, 2,40քմ մակերեսով աստիճանահարթակը և 12. 4քմ մակերեսով ծածկը ճանաչել օրինական՝ տրամադրելով Սևան համայնք, գ. Ծովագյուղ, 22-րդ փողոց թիվ 4 / 1 բնակելի տուն հասցե:

3. Արևհատ Հակոբյանին, Վազգեն, Կարեն, Մարիամ և Հասմիկ Մելոյաններին պատկանող, Սևան համայնք, գ. Ծովագյուղ, 22-րդ փողոց թիվ 4 / 1 հասցեում գտնվող 1999. 6քմ մակերեսով հողատարածքում 2020թ. կառուցված 16. 1քմ մակերեսով բնակելի տան մի մասը /ներքին մակերեսը՝ 12. 8քմ/, 2. 90քմ մակերեսով աստիճանահարթակը ճանաչել ինքնակամ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 19
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

20 օգոստոսի 2026 թվականի թիվ 2144-Ա

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԶՈՀՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆՎԱՆԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 2005թվականի հունիսի 9-ի «Անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին» N947-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2018թվականի դեկտեմբերի 6-ի N1419-Ն որոշմամբ սահմանված հավելվածի պահանջները, ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Չարենց փողոց թիվ 99 տուն հասցեում նախկինում հաշվառված, 2020թ. հոկտեմբերի 7-ին ԼՂՀ Հադրութի շրջանում մարտական գործողությունների ժամանակ զոհված Գենադի Արամի Մնացականյանի մոր՝ Իննա Լյուդվիգի Քոչարյանի դիմումը, դիմումին կից ներկայացված փաստաթղթերի փաթեթը, Սևանի համայնքապետարանում գործող բնակարանային հարցերի հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ.**

1. Հաստատել բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող զոհված զինծառայողի ընտանիքի ցուցակը՝ համաձայն Ձև N4 ամփոփ ցուցակի, և ք. Սևան, Չարենց փողոց թիվ 99 տան նախկին բնակիչ, 2020թ. հոկտեմբերի 7-ին մարտական գործողությունների ժամանակ զոհված Գենադի Արամի Մնացականյանի ծնողներին՝ Արամ Գենիկի Մնացականյանին և Իննա Լյուդվիգի Քոչարյանին, ընդգրկել բնակարանի բարելավման կարիքավոր շահառուների անվանացուցակում:
2. Սույն որոշումը և Սևանի տեղական ինքնակառավարման մարմնում բնակարանային հաշվառման ընդգրկված զոհված զինծառայողի ընտանիքի ամփոփ ցուցակը /Ձև N4/ սահմանված կարգով ներկայացնել ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 20
ք.Սևան

2328

Ձև N 4

Ա Մ Փ Ո Փ Ա Ց Ո Ւ Ց Ա Կ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԶՈՀՎԱԾ (ՄԱՀԱՑԱԾ) ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ

NN ը/կ	Զոհված (մահացած) զինծառայողի ազգանունը, անունը, հայրանունը	Համայնքի անվանումը և հաշ-վառման վերցնելու մասին համայնքի ղեկավարի որոշման համարը, ամսաթիվը, տարեթիվը	Զինծառայողի զոհվելու (մահանալու) օրը, ամիսը, տարեթիվը, պատճառական կապը, սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող ստորաբաժանման տեղեկանքի համարը, ամսաթիվը, տարեթիվը	Զոհված (մահացած) զինծառայողի օրենքով սահմանված ընտանիքի անդամների թիվը, ազգանունը, անունը, հայրանունը, ազգակցական կապը	Բնակարանային պայմանները՝ շահառուի հաշվառման վայրը, ով է տան սեփականատերը, համատեղ բնակվող անձանց թիվը և սեփականության վերաբերյալ տեղեկատվությունը, իսկ 4-րդ կարգի վթարային՝ քանդման ենթակա բնակելի տարածություններում ապրելու դեպքում՝ փաստը հավաստող եզրակացության տրամադրման օրը, ամիսը, տարեթիվը, համարը, տրամադրող մարմնի անվանումը	Պահանջվող սենյակների թիվը
1	2	3	4	5	6	7
1	Գենադի Արամի Մնացականյան	Սևան համայնք Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի օգոստոսի 20-ի թիվ 2144-Ա որոշում	07.10.2020 թ. մարտական գործողությունների հետևանքով ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ 4-րդ կայազորային քննչական բաժնի կողմից տրված թիվ 235-Զ փորձագիտական եզրակացություն 29.08.2024թ.	2 հայր՝ Արամ Գենիկի Մնացականյան, մայր՝ Իննա Լյուդվիգի Քոչարյան	հաշվառման վայրը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Չարենց 99 տուն Տան սեփականատեր՝ Արաքսյա Գյուլաբի Մնացականյան, մահացած՝ 2016թվականի փետրվարի 16-ին, հաշվառված անձանց թիվ՝ 6, որից 2-ը՝ Արամ Գենիկի Մնացականյանը, Իննա Լյուդվիգի Քոչարյանը հաշվառված և բնակվում են փաստացի	1 (մեկ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

20 օգոստոսի 2026 թվականի թիվ 2145-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի՝ N 2-6 եզրակացությամբ հաստատված Ծաղկունք բնակավայրի գլխավոր հատակագիծը՝ **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Ծաղկունք հասցեում գտնվող /վկայական՝ 09062026-05-0058/, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, այլ հողատեսք՝ գործառնական նշանակության 0.3հա մակերեսով հողատարածքի նպատակային և գործառնական նշանակությունները համապատասխանեցնել Ծաղկունք բնակավայրի գլխավոր հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման՝ գործառնական նշանակության, տրամադրել Սևան համայնք, գ. Ծաղկունք թիվ 15 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05. 01. 2026թ. N 2-Ա որոշման 2-րդ կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 20
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

20 օգոստոսի 2026 թվականի թիվ 2146-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286-Ն և ՀՀ կառավարության՝ 26.05.2016թ. N 550-Ն որոշումներով, հիմք ընդունելով քաղ. Սուրեն Ստեփանյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ-Նովայի փողոց թիվ 25 / 51 հողամաս հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 09072026-05-0053/ զբաղեցրած 0.0196 հա մակերեսով հողատարածքն ընդլայնելու մասին, հաշվի առնելով, որ նշված հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Սեփականության իրավունքով Սուրեն Ավետիքի Ստեփանյանին պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ-Նովայի փողոց թիվ 25 / 51 հողամաս հասցեում գտնվող անշարժ գույքի զբաղեցրած 0.0196հա մակերեսով հողատարածքն ընդլայնել 0. 00719հա մակերեսով / հասցե՝ Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ-Նովայի փողոց թիվ 25 / 59 հողամաս, վկայական՝ 18082026-05-0014/՝ ուղղակի վաճառքի կարգով օտարելով Սուրեն Ավետիքի Ստեփանյանին՝ հողի կադաստրային արժեքը՝ 1քմ՝ 4441. 8 դրամ վճարելու պայմանով:
2. Սույն որոշումը ենթակա է հողի պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մուծելուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 20
ք.Սևան

2330

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

20 օգոստոսի 2026 թվականի թիվ 2147-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. 2387-Ն, 04. 12. 2008թ. N 1423-Ն որոշումներով, ՀՀ վարչապետի՝ 22. 12. 2009թ. N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Ծովագյուղ բնակավայրի գլխավոր հատակագիծը և հիմք ընդունելով քաղ. Գևորգ Մարտիրոսյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, գ. Ծովագյուղ հասցեում գտնվող 0.05հա մակերեսներով հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գ. Ծովագյուղ հասցեում գտնվող, գյուղատնտեսական՝ նպատակային նշանակության, վարելահող՝ գործառնական նշանակության 0.05հա մակերեսով հողատեսքի /վկայական՝ 19062026-05-0021/ նպատակային և գործառնական նշանակությունները համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Ծովագյուղ բնակավայրի գլխավոր հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, բնակելի՝ գործառնական նշանակության:
2. Սևան համայնք, գ. Ծովագյուղ հասցեում գտնվող 0.05հա մակերեսով հողատարածքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Ծովագյուղ, 7-րդ փողոց թիվ 63 հողամաս հասցե:
3. Գևորգ Կամոյի Մարտիրոսյանին՝ Սևան համայնքի բյուջեի 900165101255 հաշվիամարին վճարելի հողամասերի կադաստրային արժեքի՝ նպատակային նշանակության փոփոխման պահին առկա տարբերությունը՝ 207150 դրամ:
4. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 20
ք.Սևան

2331

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

20 օգոստոսի 2026 թվականի թիվ 2148-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի N 1637-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝**որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի հունիսի 29-ի «Անշարժ գույքի մակերեսի ուղղման, ներքին ձևափոխման և ինքնակամ կատարված շինարարական աշխատանքներն օրինական ճանաչելու մասին» N 1637-Ա որոշման 2-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) «/հաշվառման տեղեկանք՝ 2026Q2VYTK/» բառերի փոխարեն կարդալ «/հաշվառման տեղեկանք՝ 2026Q5DSBQ /» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 20
ք.Սևան

2332

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

20 օգոստոսի 2026 թվականի թիվ 2149-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղ. Անժիկ Բեկի Հարությունյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, Կ. Դեմիրճյան փողոց թիվ 21 / 35 հասցեում կառուցված 34. 30 քմ մակերեսով ավտոտնակը և 34. 30 քմ մակերեսով զբաղեցրած հողատարածքն ուղղակի գործարքով Նորիկ Մարաբյանին վաճառելու մասին, նկատի ունենալով, որ դրանք ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չեն հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Կ. Դեմիրճյան փողոց թիվ 21 / 35 հասցեում գտնվող, Սևան համայնքի ղեկավարի՝ 21.07.2026թ. թիվ 1821-Ա որոշմամբ՝ օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 17.08.2026թ. պետական գրանցում ստացած 34.30 քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ՝ 2887. 5 դրամ, 34.30 քմ մակերեսով ավտոտնակը՝ 1քմ՝ 1673 դրամ՝ ուղղակի գործարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած քաղ. Անժիկ Բեկի Հարությունյանին:
2. Քաղ. Անժիկ Հարությունյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերն իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 20
ք.Սևան

2333

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

20 օգոստոսի 2026 թվականի թիվ 2150-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286-Ն և ՀՀ կառավարության՝ 26.05.2016թ. N550-Ն որոշումներով, հիմք ընդունելով քաղ. Արա Մարգարյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, համայնք Սևան, գ. Լճաշեն, 10-րդ փողոց, 38 հողամաս հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 26122022-05-0036/ զբաղեցրած 0.23877հա մակերեսով հողատարածքն ընդլայնելու մասին, հաշվի առնելով, որ նշված հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Սեփականության իրավունքով Արա Սամվելի Մարգարյանին պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Լճաշեն, 10-րդ փողոց թիվ 38 հողամաս հասցեում գտնվող հողամասի զբաղեցրած 0.23877 հա մակերեսով հողատարածքն ընդլայնել 0.23865 հա մակերեսով /հասցե՝ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Լճաշեն, 19-րդ փողոց, 3-5 հողամաս, վկայական՝ 30072026-05-0074/՝ ուղղակի վաճառքի կարգով օտարելով Արա Սամվելի Մարգարյանին՝ հողի կադաստրային արժեքը՝ 1քմ՝ 792 ՀՀ դրամ, վճարելու պայմանով:
2. Սույն որոշումը ենթակա է հողի պետական գրանցման հողի կադաստրային արժեքը վճարելուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 20
ք.Սևան

2334

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

20 օգոստոսի 2026 թվականի թիվ 2151-Ա

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 18.11.2025թ. N125-Ն որոշման 2-րդ կետի և հաշվի առնելով «Ֆուլ-Լայն» ՍՊԸ-ի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Ձևակերպել կառուցապատող «Ֆուլ-Լայն» ՍՊԸ-ի կողմից՝ Սևան համայնք, ք. Սևան, Երևանյան խճուղի թիվ 26 հասցեում գտնվող հողատարածքում՝ հասարակական նշանակության շինության վերակառուցման և կցակառույցի կառուցման շահագործման թույլտվությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 20
ք.Սևան

2335

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

20 օգոստոսի 2026 թվականի թիվ 2152-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղաքացի Արմեն Վարդանյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Ա. Մյասնիկյան փողոց, 9 / 1 բնակելի տուն հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ N 27072026-05-0011/ համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևանհամայնք, ք. Սևան, Ա. Մյասնիկյան փողոց թիվ 9 / 1 բնակելի տուն հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Հրազդանի փողոց թիվ 1 / 3 անասնաշենք հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 20
ք.Սևան

2336

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

20 օգոստոսի 2026 թվականի թիվ 2153-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱԿՈԲ ՔԵՀՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննելով քաղաքացի Հակոբ Քեհյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի նյութերը՝ պարզեցի. «Սևան» ԱՊ-ի՝ 05.05.2026թվակնի 19-827 և Զ-86, Զ-111 տեղեկատվության համաձայն՝ կառուցապատման իրավունքով Հակոբ Քեհյանին պատկանող հողատարածքում առկա են ինքնակամ շինություններ (մետաղական տնակներ, մետաղյա վագոն-տնակ, մետաղական զրուցարաններ, քարե սանհանգույց): Դա արձանագրված է ՀՀ ՇՄՆ էկոպարեկային ծառայության N 04022686 արձանագրությամբ: Հարուցված վարչական վարույթի շրջանակներում քաղաքացին սահմանված կարգով ծանուցվել է, սակայն չի ներկայացել Սևանի համայնքապետարան լսումներին մասնակցելու և պարզաբանումներ տալու նպատակով: Հարուցված վարույթի նյութերը մանրամասն ուսումնասիրելու և իրավախախտի պարզաբանումները ստանալու նպատակով 03.06.2026թվականին Սևան համայնքի ղեկավար վարչական վարույթը կասեցրել է: Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի կողմից տրված տեղեկանքով հիմնավորվում է, որ Հակոբ Քեհյանին, սահմանված կարգով, Սևանի համայնքապետարանի կողմից չի տրվել շինարարության թույլտվություն: Համաձայն ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1 հոդվածի պահանջների քաղաքացուն ուղղված ծանուցումը 26.06.2026 թվականին տեղադրվել է «azdarar.am» կայքում: Օրենքով սահմանված ժամկետի լրանալուց հետո քաղաքացի Հակոբ Քեհյանը համարվում է ծանուցված: Հիմնավորված է այն փաստը, որ Հակոբ Քեհյանը խախտել է ՀՀ կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N 896-Ն, 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշումների, ՀՀ «Քաղաքաշինության մասին» օրենքի 6-րդ և 23-րդ հոդվածի պահանջները, առանց օրենքով սահմանված քաղաքաշինական փաստաթղթերի, առանց շինարարության թույլտվության, ինքնակամ կառուցել կամ տեղադրել է շինություններ: Օրենքով սահմանված կարգով հարուցված վարույթի շրջանակում հիմնավորված է համարվել նաև այն փաստը, որ տվյալ շինությունները տեղադրվել են պետական սեփականություն հանդիսացող, ««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին մշտական և անհատույց օգտագործման իրավունքով պատկանող հողատարածքում: Այդ հողատարածքները հանդիսանում են ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող պետական սեփականության հողատարածքներ: Համաձայն ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի պահանջների՝ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող հողատարածքներում ինքնակամ կառուցված շինություններն օրինականացման ենթակա չեն և պետք է ապամոնտաժվեն: Ղեկավարվելով «Տեղական

ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետ, 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով, ինչպես նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, ՀՀ «Հողային օրենսգրքի» 43-րդ հոդվածի 2-րդ մասի, 60-րդ հոդվածի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 6 և 23 հոդվածների, 26-րդ հոդվածի ե) կետի, ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 37-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի 912-Ն որոշման 2-րդ կետի, ՀՀ կառավարության 18.12.2008 թվականի 1563-Ն որոշման պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Հանձնարարել Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին՝ ««Սևան» Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ու հասարակական կարգի պահպանության ծառայության օժանդակությամբ ապամոնտաժել կառուցապատման իրավունքով Հակոբ Քեհյանին տրամադրված հողատարածքում առկա ինքնակամ շինությունները:
2. Առաջարկել ՆԳՆ ՀՈԳՎ Ոստիկանության Սևանի բաժնի պետին՝ ապահովել հասարակական կարգի պահպանությունը վարչական հարկադրանքի կիրառման ժամանակ:
3. Սույն որոշման 1-ին կետի պահանջները չկատարելու դեպքում հարցը լուծել օրենքով սահմանված դատական կարգով:
4. Սույն որոշումը կարող է վերադասության կարգով բողոքարկվել Սևան համայնքի ղեկավարին 15 օրվա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան՝ 2 ամսվա ընթացքում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 20
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

29 հուլիսի 2026 թվականի թիվ 1923-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48, 48[1], 60 և 80-րդ հոդվածներով, հիմք ընդունելով 2026թ. հուլիսի 6-ին կայացած մրցույթի արդյունքների վերաբերյալ Սևան համայնքի տարածքում կառուցապատման իրավունքով հողատարածքների տրամադրման մրցութային հանձնաժողովի կողմից կազմված արձանագրությունները՝ **որոշում եմ.**

1. Համաձայն մրցույթի արդյունքների՝ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Խ. Աբովյան փողոց թիվ 5 / 1 հողամաս հասցեում գտնվող 0. 0118հա մակերեսով, բնակավայրերի՝ նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման՝ գործառնական նշանակության հողատարածքի 82. 6քմ մակերեսը՝ կանաչապատման, 35. 4քմ մակերեսը՝ տաղավարի տեղադրման նպատակով, 15 տարի կառուցապատման իրավունքով, 26200 դրամ տարեկան վճարով տրամադրել մրցույթում հաղթող ճանաչված Սևակ Հրաչյայի Բեգլարյանին:
2. Սևակ Հրաչյայի Բեգլարյանի հետ կնքել կառուցապատման իրավունքի պայմանագիր:
3. Սույն որոշմամբ ձեռք բերված տարածքի կառուցապատման իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի հուլիսի 29
ք.Սևան

2093